ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն Հայոց լեզու և գրականություն

Թեմա Գրողի կենսագրության ուսուցումը Հովհ. Թումանյանի օրինակով

Կատարող Մխիթարյան Հայկուհի Վարդգեսի
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար Դանիելյան Սուրեն, բանասիրական գիտ. դոկտոր-պրոֆեսոր
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

# Բովանդակություն

Ներածություն ..... 3
Տոհմը ..... 4
Կրթությունը ..... 5
Ամուսնությունը և ընտանիքը ..... 6
Հասրակական-քաղաքական գործունեությունը և հումանիզմը ..... 6
Բանաստեղծի մահը ..... 9
Մեծերը Թումանյանի մասին ..... 10
Թումանյանը ընկերների հուշերում ..... 13
Վերջաբան ..... 14
Եզրակացություն ..... 16
Օգտագործված գրականության ցանկ ..... 17

# Ներածություն

«Գրողի կենսագրությունը նրա ստեղծագործության ամենալավ մեկնությունն է, իսկ ստեղծագործությունը՝ նրա կյանքի լավագույն հիմնավորումը»։

Բելինսկի

Գրողի կյանքը պետք է նպաստի աշակերտների դաստիարակությանը։ Պետք է վարակել նրանց գրողի հայրենանվեր վարքագծով, բնավորության առաքինությունների, հումանիզմի ու ժողովրդասիրության, ընդհանուրի շահերի նկատմամբ սրտացավության, հասարակական պարտքի գիտակցման ոգով։

«Անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար»։ Այս խոսքերը պատկանում են այն հանճարեղ բանաստեղծին, ով դարձավ մեր ժողովրդի լուսատու լապտերը, հայ գրականության ամենափայլուն աստղը։ Ճիշտ է դիտարկել մեծն Պ. Սևակը՝ նշելով, որ 1869 թվին մայր Հայաստանի արգանդը եղավ սրբորեն բեղուն, մի մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում… Այս մանուկը փոխելու էր հայ գրականության աշխարհայացքը, դառնալու էր մի լուսավոր փարոս, որ կլուսավորեր մարդկանց հոգիները, կսովորեցներ մարդկային կարևորագույն արժեքներն ու մարդ մնալու արվեստը։ Հողից ուժ ու սնունդ ստացած այս լեռնեցին խտացնում է մի ամբողջ ժողովրդի ազգային նկարագիրն ու պատմական գոյատևման վիթխարի ուժը։

Գրողի կենսագրությունը ուսուցանելիս առաջնորդվել եմ հետևյալ պլանով.

- Գրողի տոհմածառը, ծնողները և մանկությունը
- Ապրած ժամանակաշրջանը և ծննդավայրը
- Ինքնակենսագրական նյութեր, գրողի նամականին
- Հասարակական-քաղաքական դիմանկար
- Ժամանակակիցների հուշերը գրողի մասին
- Հայ և օտարազգի նշանավոր մարդկանց ասույթները գրողի մասին

# Տոհմը

Հ. Թումանյանի առաջին կենսագիրը հենց ինքն է՝ մեծագույն բանաստեղծը։ Տասնութամյա հասակում նա գրել է իր նախնիների պատմությունը՝ խորագրելով «Գործք հարանց»։ 90-ական թվականներին կազմել է իր տոհմի ճյուղագրությունը, 1905 թվականին «Լույս» օրացույց-հանդեսի համար շարադրել համառոտ կենսագրության սկիզբը։

«Մեր տոհմը Լոռու հին ազնվական տոհմերից մեկն է։ Իր մեջ ունի պահած շատ ավանդություններ։ Իմ հայրը՝ Տեր Թադեոսը, նույն գյուղի քահանան էր։ Ամենալավ և ամենամեծ բանը, որ ես ունեցել եմ կյանքում, այդ եղել է իմ հայրը։ Նա ազնիվ մարդ էր և ազնվական՝ բառի բովանդակ մտքով։ Իսկ մայրս բոլորովին ուրիշ մարդ էր։ Երկու ծայրահեղորեն տարբեր արարածներ հանդիպել էին իրար։ Մայրս – Սոնան, որ նույն գյուղից էր, սարում աչքը բաց արած մի կատարյալ սարի աղջիկ էր… Ահա այս ծնողներից ես ծնվել եմ 1869 թվականի փետրվարի 7-ին (19-ին)։ Մանկությունս անց եմ կացրել մեր գյուղում ու սարերում։ Տասը տարեկան մեր գյուղից հեռացել եմ Ջալալօղլի, ուր մեծ ուսումնարան կար, Լոռիում շատ հայտնի «Տիգրան վարժապետի» հսկողության տակ։ Այնտեղից էլ՝ Թիֆլիս, Ներսիսյան դպրոց, որ չեմ ավարտել»։ Սա իր հիշողություններն են։

Ըստ թումանյանագետների նրա տոհմը ծագում է Մամիկոնյան նախարարական տան մի ճյուղից՝ Համազասպյանները X – XI դարերում Տարոնից գաղթել և բնակություն են հաստատել Լոռվա Դսեղ գյուղում և նրա շրջակայքում։ Այս մասին պահպանվել են վավերագրեր։ Թումանյանի նամակների մի մասը կրում է «Հովհաննես Թումանյանց – Մամիկոնյան» կնքադրոշմը։

Ասլան (1839-1898թթ.) բանաստեղծի հայրն է։ Սանահինի վանքում 2 տարի դպիրի պաշտոն վարելուց հետո ձեռնադրվում է քահանա՝ Տեր-Թադևոս անունով։ Սոնան (1842-1936թթ.) բանաստեղծի մայրը, ծագումով Քոչարյանների տոհմից է, նույնպես Դեղից։ Սոնան և Տեր-Թադևոսը ունեցել են յոթ զավակ՝ չորս տղա և երեք աղջիկ։

## Կրթությունը

Թումանյանը նախնական գրաճանաչություն սովորել է հորից։ Ութ տարեկանում գրել-կարդալ սովորել է հորեղբոր՝ Գրիշա բիձու նորաբաց «դպրոցում», որտեղ մատիտները արճիճից էին, թանաքը՝ կակաչ ծաղկից։ 1877 թվականին հաճախում է գյուղում բացված Սահակ վարժապետի դպրոցը, որն իր «Ինքնակենսագրություն» աշխատության մեջ շատ վառ ու պատկերավոր է պատկերում։ Դպրոցը Տեր-Թոդիկյան մեթոդներ էր գործադրում՝ ծեծ ու վիրավորանք՝ գիտելիքների չնչին պաշարի դիմաց։ Դաժան ծեծից Թումանյանը զերծ էր մնացել, քանի որ «վարժապետը քաշվում էր հորիցս, մանավանդ մորիցս էր վախենում»։

1879 թվականին Տեր-Թադևոսը որդուն տանում է Էջմիածին՝ Գևորգյան ճեմարան, սակայն տեսնելով սաների դեղնած դեմքերը, նրան ետ է բերում։ Աշնանը նա ընդունվում է Ջալալօղլու (այժմ Ստեփանավան) նորաբաց երկսեռ դպրոցը։ 1883 թվականի ամռանը ցարական կառավարության դժնի հրամանով փակվում են հայկական դպրոցները։ Թումանյանը կրկին վերադառնում է Դսեղ։ Սեպտեմբերին մեկնում է Թիֆլիս՝ Միջնակարգ զինվորական դպրոց, ցարական Ռուսաստանում՝ կադետական դպրոցը, որովհետև հայրը ցանկանում էր, որ որդին իր պապի նման զինվորական դառնա, սակայն չդիմանալով գիշերօթիկի վատ ու ծանր կյանքին Թումանյանը թողնում է այն։ Հետո ընդունվում է Ներսիսյան դպրոցի երկրորդ դասարան։ Երեք տարի ուսանելուց հետո ձեռք է բերում հարուստ գիտելիքներ, հատկապես հումանիտար գիտությունների ասպարեզում։ Նրա ուսուցիչներն էին ժամանակի հայտնի մտավորականներ Ծերենցը (Հ. Շիշմանյան), Գ. Բարխուդարյանը (Շիլլերի թարգմանիչը), բանասեր Կ. Կոստանյանը, ճանաչված մանկավարժ Փ. Վարդանյանը և այլոք։ Պատանի բանաստեղծի աշխարհայացքի ձևավորման գործում կարևոր նշանակություն են ունենում Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի», Ռաֆֆու «Սամվել» վեպերը, Մ. Նալբանդյանի գեղարվեստական ստեղծագործությունները։

## Ամուսնությունը և ընտանիքը

Կնոջ՝ Օլգա Մաճկալյանի հետ հանդիպման և ամուսնության մասին պատմվել է հենց իր՝ Օլգայի հուշերում։ «1888 թվականի հունվարի 1-ին մայրս մեր խոհանոցում մի ծիտ է տեսնում ու բերում սենյակ։ Մայրս ասաց, որ դա լավ նշան է։ Նոր տարվա բերած բախտը։ Երեկոյան Օհանեսը եկավ մեր տուն՝ Նոր տարին շնորհավորելու… Օհանեսը մի երկու ժամ նստեց, խոսեցին դեսից-դենից ու գնաց։ Մայրս ասաց, որ ուզում են մեզ նշանել… Երկու ամիս անց նշանեցին։ Նշանվելուց հետո նա համարյա ամեն օր մեզ մոտ էր լինում և գնում էր ուշ երեկոյան։ Զատկին  եկավ մի զույգ գեղեցիկ կոշիկներ բերեց։ Կոշիկներից հետո առաջին նվերը, որ ստացել եմ իմ նշանածից, Հոմերոսի «Իլիականն» ու «Ոդիսականն» էին և «Վերք Հայաստանին»։ Դեկտեմբերի մեկին պսակվեցինք։ Ես տասնյոթ տարեկան էի, Օհանեսը՝ տասնինը»։

Թումանյանն ուներ տասը զավակ՝ Նվարդ (1892-1957թթ.), Արփենիկ (1899-1981թթ.), Անուշ (1898-1927թթ.), Աշխեն (1891-1968թթ.), Սեդա (1905-1988թթ.), Թամար (1907-1989թթ.), Մուշեղ (1889-1938թթ.), Արտավազդ (1894-1918թթ.), Համլիկ (1896-1938թթ.) և Արեգ (1900-1939թթ.)։ Վեց դուստր և չորս որդի։ Հետագայում նրա չորս որդիներն էլ զինվորներ դարձան, իսկ դուստրերը՝ գթության քույրեր։ Այս փաստը երևում է Անդրանիկին ուղղված նամակում, որտեղ հայտնում է, որ պատրաստ է հայրենիքին նվիրաբերելու ամենակարևորը, ինչ ունի կյանքում։

## Հասարակական-քաղաքական գործունեությունը և հումանիզմը

Իրեն հատուկ հեռատեսությամբ նա դեռևս 1913 թվականին կանխատեսել էր 1915 թվականի սարսափները՝ գրելով. «Թուրքիան կդիմի ամենահրեշավոր միջոցներին՝ վերջ դնելու հայ ժողովրդին իր հարցի հետ միասին»։ Թումանյանը մեկնեց Կովկասյան ռազմաճակատ անձամբ ականատես լինելով թուրքերի և քրդերի կատարած

վայրագություններին։ Եվ իր նոթատետրում գրառումներ կատարեց, որոնք մեկ դար անց անգամ անհնար է կարդալ առանց արցունքների։

Զարկվա՛ծ հայրենիք,

Զըրկվա՛ծ հայրենիք։

Կովկասյան ռազմաճակատի դժոխային տեսարանները աչքի առջև, հյուծված Թումանյանը գալիս է Թիֆլիս, բժիշկները նրան խորհուրդ են տալիս մեկնել առողջարան՝ կազդուրվելու։ Նա գումար չունենալու պատճառով, ընկերջ խորհրդով մեկնում է Թաբախմելա ամառանոցը, հուսալով, որ ավարտին կհասցնի «Հազարան բլբուլ» ստեղծագործությունը, սակայն երեք օր անց Եղեռնի և ավերիչ գաղթի բոթն է վրա հասնում։ Վատառողջ Թումանյանն անմիջապես վերադարձավ Թիֆլիս և գրեց «Հանգիստ ու լիքը հավատով» հոդվածը, որում կոչ էր անում աշխարհասփյուռ հայերին համախմբվել գաղթականներին փրկելու հարցի շուրջ։ Ազգի ողբերգությունն ու անասելի վիշտը հոգում՝ նա Թիֆլիսից շտապում է Էջմիածին, որտեղ հավաքվել էին հազարավոր գաղթականներ ու որբ մանուկներ։ Ցեղասպանության սարսափները տեսած, խեղված ճակատագրերով անթիվ-անհամար երեխաներ հավաքվել էին Էջմիածնում։ Նրանց կողքին էր մեծն բանաստեղծը։ Տասնյակ հիվանդություններ, ամեն վայրկյան մահացող որբեր և բուժքույրեր, սակայն Թումանյանը իր հետ բերել էր նաև դստերը՝ Նվարդին։ Հենց այստեղ են հանդիպում Թումանյանն ու Կաթողիկոսը, որի ժամանակ բանաստեղծն առաջին անգամ տալիս է իրեն թերևս ամենաարժանի «Ամենայն հայոց բանաստեղծ» անվանումը։ Երբ կաթողիկոսը բարձրաձայնում է, որ ինքը ամենայն հայոց կաթողիկոսն է և հայտարարում է, որ այլևս տեղ չկա որբերին ընդունելու, Թումանյանն ընդդիմանում է՝ ասելով, որ նրան է դիմում «Ամենայն հայոց բանաստեղծը» և խնդրում տեղավորել որբերին Էջմիածնում։ Հետո նա դառնում է «ամենայն հայոց հայրիկ» բոլոր որբերի համար։ Նա իրականացրեց որբ երեխաների տեղաբաշխման, սննդի, հագուստի հետ կապված բորոր հարցերի համակարգումը։ Սակայն բանաստեղծը գիտակցում էր, որ նրանց այդ ամենից զատ հոգեկան

աջակցություն էր պետք։ Նա կոչ է անում բոլոր հայ կանանց լինել որբերի կողքին։ Էջմիածնում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Դիլիջանում, Թբիլիսիում բացվել էին մանկատներ, որոնց բոլորի հետ կապ էր պահպանում Թումանյանը։ Նա նաև հայանպաստ հասարակական կազմակերպությունների անդամ էր ու նախագահ (ՀՕԿ, Հայ Գրողների Կովկասյան միություն)։ Որբերի առօրյան թեթևացնելու համար նա հազար ու մի հնարք էր մտածում։ Օրինակ՝ պայման էր դրել, ով դասը լավ սովորի, նրան կծանոթացնի Անդրանիկի հետ։ Արգենտինայի հայտնի հայուհի Ալիսա Կիրակոսյանի հայրը նրանց շարքերում էր և քրտնաջան սովորելուց հետո հասնում է իր փափագին՝ ծանոթանալ Անդրանիկի հետ։

Թումանյանը «Հայ գրողների կովկասյան միության» նախագահն էր և զբաղվում էր նաև որբերի որդեգրման հարցերով։ Նա տասը զավակ ունենալով հանդերձ տասնյակից ավելի երեխաների որդեգրեց և տարավ Թիֆլիսի իր տուն։ Այդ օրերին բոլորը ծայրահեղ ծանր պայմաններում էին ապրում, սակայն Թումանյանը հրաժարվեց գումար վերցնել որևէ հասարակական կազմակերպությունից։ Այդ երեխաների մեջ էր նաև Կարեն Դեմիրճյանի մայրը՝ Լուսնթագը, որը գաղթել էր Վանից, նրա աչքի առջև սպանել էին ողջ ընտանիքին, փրկվել էին ինքն ու քույրը։ Հետագայում Լուսնթագի համար ամենալուսավորը հուշ մնաց Թումանյանը։

Թումանյանը հայ մարդու հուզական աշխարհի ու արթուն բանականության ներդաշնակ միասնությունն է, ով ապրելու իր նվիրական երազն ուներ. «Ու հալվեի, ծավալվեի, ամենքի հետ լինեի»։ Սա է ամենամեծ հումանիզմը, մարդասիրությունը, որն ուներ մեր անկրկնելի բանաստեղծը։ Նա, իսկապես, ողջակիզվեց, որ շատանար լույսը։

1899 թվականին բանաստեղծը Թիֆլիսում ստեղծել է «Վերնատուն» գրական խմբակը, որի անդամներն էին հայ նշանավոր գրողներ ու բանաստեղծներ (Ավ. Իսահակյան, Լ. Շանթ, Ղ. Աղայան, Դ. Դեմիրճյան, Պ. Պռոշյան, Ն. Աղբալյան և այլոք)։ XX դարի սկզբին նա հայտնի է դառնում որպես հասարակական գործիչ։ 1905-1907թթ.-ին մասնակցում է

Բաքվի հայ-թաթարական ընդհարումների հաշտեցմանը։ Ցարական կառավարության կողմից երկու անգամ ձերբակալվում է (1908 և 1911թթ.) ու բանտ ընկնում։ 1912-1921թթ.-ին հայ գրողների կովկասյան միության նախագահն էր։ Այնուհետև խորհրդայնացումից հետո դառնում է Հայաստանի Օգնության կոմիտեի (ՀՕԿ) նախագահ։ 1895 թվականի նոյեմբերին Թումանյանը ուղևորություն է կատարում Բորժոմ-Ախալցխա-Ալեքսանդրապոլ-Կարս-Ղարաքիլիսա-Դիլիջան-Երևան-Էջմիածին ուղեգծով։ Նա ցանկանում էր կազմակերպել «Հանգանակող ու գործադրող կոմիտե»։ Ալեքսանդրապոլում հյուրընկալում է Ավ. Իսահակյանին։ Իր նամակներից մեկում գրում է. «Ճանապարհին պատիժներից շատ պատիվներ եմ առել…»։

Հասարակական-քաղաքական կյանքին զուգահեռ նա լրջորեն զբաղվում էր ինքնազարգացմամբ՝ ուսումնասիրելով համաշխարհային և հայ դասական գրականությունը։ Նա այդ տարիներին է տպագրում մի քանի ստեղծագործական և թարգմանական գործեր՝ Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» (1896թ.) և Լերմոնտովի «Մցիրին» (1896թ.)։

## Բանաստեղծի մահը

1918 թվականին մահացավ բանաստեղծի որդին՝ Արտիկը, որի դին այդպես էլ չգտավ Թումանյանը։ Սպանվել էր նաև եղբայրը՝ Ռոստոմը։ Որդու, եղբայրների կորուստը Թումանյանի կյանքի մեծագույն հարվածը դարձավ։ Բայց նա մինչև վերջ շարունակեց ազգային հարցերով զբաղվել։ Նա նույնիսկ մահվան մահճում չկորցրեց անսահման մարդասիրությունն ու լավատեսությունը։ Մեռնող բանաստեղծը հարցնում է բժշկին, թե ինչ է մարդը։ «Մարդը ոչինչ է», - պատասխանում է բժիշկը, որին ի պատասխան հակադարձում է բանաստեղծը. «Մարդն ամեն ինչ է»։ Այնուհետև շրջվելով իր հարազատներին ասում է. «Ղոչաղ կացեք…»։

Թումանյանը մահացավ Մոսկվայի հիվանդանոցում՝ 1923 թվականի մարտի 23-ին՝ հիսունչորս տարեկան հասակում: Տասը երեխաներից երեքը նրա հետ էին: Նրա որդին՝ Արեգը, վերցնում է հոր սիրտը դիահերձարանից: Թիֆլիսում նրան հուղարկավորում են, իսկ սիրտը՝ ավելի քան քսան տարի պահում տանը: Այն սենյակում, որտեղ դեղատուփն էր, Թումանյանի մահից հետո մի օր գիշերում է Իսահակյանը: Նա ամբողջ գիշեր չի կարողանում քնել: Հուզված դուրս է գալիս սենյակից և խորհուրդ տալիս տանը չպահել սիրտը: Այն հանձնում են Երևանի Բժշկական ինստիտուտ, այնուհետև 1994 թվականին նրա սիրտը հուղարկավորվում է Դսեղի հայրական տան բակում:

Ժառանգությունը Երևան է տեղափոխել և դուստրերի հետ թանգարան է ստեղծել Օլգա Թումանյանը՝ բանաստեղծի կինը: Այդ գործընթացին աջակցել է Անաստաս Միկոյանը:

## Մեծերը Թումանյանի մասին

Մեր թռիչքը Թումանյանի արվեստի գոհարակերտ բարձրունքներից այն կողմ չի անցել:

Նրա կախարդական գրիչը ուր դիպավ, կատարվեց իսկական արվեստի հրաշքը՝ լինի առակ թե քառյակ, հեքիաթ թե պատմվածք, հովվերգություն թե վիպերգություն:

Ավետիք Իսահակյան

Մեր նորահաս բանաստեղծների մեջ Հովհաննես Թումանյանը միշտ բարձր է ամենքից էլ և ունի փայլուն ապագա… նա ունի բարձրաթռիչք երևակայություն, ճոխ և սահուն լեզու, խորաթափանց զննողություն և այն բոլոր հոգեբանական առանձնահատկությունները, որոնք պետք են մի ապագա ինքնուրույն բանաստեղծի տաղանդն ու հանճարը բնորոշելու համար:

Ղազարոս Աղայան

Հովհաննես Թումանյանն ստեղծել է իր սեփական երկերը մեր պոեզիայի մեջ: Նա արդեն վարպետ է ամեն կողմից, մեծ գեղարվեստագետ և ժողովրդական հոգու

իմաստուն ու վսեմ թարգման։ Նա կանգնած է իր հստակ ճանապարհի վրա, որ լի է գեղարվեստական հրաշալիքներով։

Այսօր Թումանյանն իր լեզուն հասցրել է այն բյուրեղանման պարզության, որը մոտեցնում է նրան Պուշկինին, և որը նրա գերագույն արժանիքներից մեկը պիտի համավի։

Վահան Տերյան

Հովհաննես Թումանյանի գրեթե բոլոր գրվածքները կարելի է այս կամ այն ձևով երաժշտության վերածել, այնքան տրամադրող ու հնչուն են դրանք։ Մեր բանաստեղծներից և ո՛չ մեկն այնքան չի օգտագործվել կոմպոզիտորների կողմից, որքան Հովհաննես Թումանյանը։

Արմեն Տիգրանյան

Թումանյանը մեր մշակույթի, մեր մտավոր խոյանքների, մեր սլացումների ու թռիչքների ամենաբարձր, ամենաերկնամերձ կատարն է։

Հրաչյա Քոչար

Թումանյանի պոեզիան Հայաստանն ինքն է՝ հնադարյան և նոր, հարություն առած և բանաստեղծությամբ արտահայտված՝ մեծ վարպետի ձեռքով։

Վալերի Բրյուսով

Թումանյանը հենց նա է, ում հետ ենք մենք ամենքս՝ կամա թե ակամա, գիտությամբ թե անգիտությամբ։ Հետն ենք ամբողջ կյանքներումս՝ տակավին գրաճանաչ չդարձած և մինչև մահվան մահիճ։ Հետն ենք առավել, քան որևէ մեկ այլ գրողի։

Պարույր Սևակ

Հովհաննես Թումանյանը ճառագայթող մարդ էր։ Բանաստեղծ ոչ միայն գրչով, այլև իր անձով, իրկյանքով և կենցաղով։ Անսպառ վեհանձնության տպավորություն մը

կգործեր, որովհետև անիկա ինքզինքը կշռայլեր անհաշիվ: Կյանքի դժվարին ճամբաներու վրա կքալեր ձեռքերը բեռնավոր գանձերով և շնորհներով: Հարուստ էր և զեղուն բարոյական ուժերով, գերակշիռ ուժերով, որովհետև նաև իր մոիչ ուժը սերն էր: Բայց ոչ արդի սերունդը, ոչ գալիք սերունդները չեն մոռանար զինքը: Վերագնահատման ամենախիստ բովերեն Հովհաննես Թումանյանի անձը և երկը դուրս կուգան անեղծ և պայծառ: Անիկա իր էության ամենաբարձր արտահայություններով միշտ պիտի մնա ներկա և թերևս պիտի ըլլա միակ հաստատ օղակը, որ ապագան պիտի կապե անցյալին:

Զապել Եսայան

Ան (Թումանյան) անհամեմատ բարձր է իր ժամանակէն ու անոր մէջէն կու գան մեզի խօսելու կարգ մը ձայներ, անոնցմէ, որոնք վարէն, շատ խորերէն կու գան երբեմն:

Իր ամբողջ գործին նկարագիրն է ազնուական բարութիւն մը, մաքուր՝ մեր ցեղին հոգիին նման:

Հակոբ Օշական

Հովհաննես Թումանյան՝ հոյակապ կոթողը մեր գրականության, ցեղի արգանդից ծնված հանճար, մանուկ հոգվով, հոգով սուրբ, այն ամուր, շքեղ սյունը, որին ապահով կոթնած է հայ գրականության գեղեցիկ, հոյակապ շենքը…

Լևոն Շանթ

Թումանյանը ժողովրդական հանճարի փայլատակում է: Ծնվելով հողից, ունենալով լեռնցու մեծ սիրտ ու պայծառ երևակայություն՝ նա իր ստեղծագործության մեջ խտացրեց իր ժողովրդի ազգային նկարագիրը, նրա ճակատագիրն ու պատմական գոյատևման վիթխարի ուժը: Նա ի տես աշխարհի բարձրացրեց մեր ժողովրդի համամարդկային ոգին, բարի սիրտը, անմար, հեթանոս հավատը բնության նկատմամբ:

Մարտիրոս Սարյան

# Թումանյանը ընկերների հուշերում

* * *

Թոթովենցը Թումանյանին առաջին անգամ տեսել է Էջմիածնի վանքի բակում, որտեղ հավաքվել էին մեծ թվով գաղթականներ:Ամեն կետում մարդ էր մեռնում, շատերը սովից կամ հիվանդություններից...

Հանկարծ սկսում է անձրև, որը քիչ ժամանակ անց վերածվում է տեղատարափ անձրևի և հեղհեղում է գետինը:Ամեն տեղ լցվեց գաղթականներով, բայց դեռ հազարավոր գաղթականներ դրսում էին և Թումանյանը ստիպված գաղթականների առաջ բացում է նոր կառուցվող վեհարանը, որ մինչև այդ անձեռնմխելի էր: Դա զայրացնում է Կաթողիկոսին (Գևորգ Ե): Ասում էին, որ երեկոյան Վեհափառը կանչել է Թումանյանին և հանդիմանել նրան այդ «բռնի» գործողությունների համար: Վեհափառը պատվիրել է, որ Թումանյանը այլևս այդպիսի բան չանի, սակայն Թումանյանը պատասխանել է, որ պիտի անի, եթե անհրաժեշտություն լինի:Հայոց հայրապետը կանգնել է ոտքի և հայտարարել.

- Դուք խոսում եք Ամենայն Հայոց Հայրապետի հետ:

Գրողը նրան պատասխանել է.

- Իսկ դուք խոսում եք ամենայն հայոց բանաստեղծի հետ:

* * *

Մի օր, սեղանի շուրջը Թումանյանը առաջարկում է խմել Անդրանիկի կենացը և ասում.

- Սրանից 20 տարի առաջ կար երկու նշանավոր բան՝ Խրիմյան Հայրիկը և իմ «Շունն ու կատուն», 20 տարի է անցել, բայց էլի երկու նշանավոր բան կա՛ իմ «Շունն ու կատուն»

և Անդրանիկը, խմում եմ երկու նշանավորներից մեկի՛ Անդրանիկի կենացը: Հովհ.Թումանյանի հումորով արված այդ գեղեցիկ և իմաստալից համեմատությունը շատ աշխույժ ծիծաղ է առաջացնում: Անդրանիկը դրան պատասխանում է.

- Կանցնեն տարիներ, ոչ ես կլինեմ, ոչ էլ Թումանյանը, բայց կլինի մի նշանավոր բան՝ «Շունն ու կատուն», խմենք նրա կենացը:

* * *

Թումանյանի տանը Անդրանիկը իր կռիվներից ինչ-որ բան էր պատմում և Թումանյանը կլանված լսում էր. -Թուրս քաշեցի..., - ասաց Անդրանիկը և կանգ առավ:

Նա ուներ այդպիսի սովորություն, այդ կանգ առնելը ժամանակ էր տալիս որպեսզի լսողը ընդգրկի պահը: Բայց Թումանյանը չհամբերեց և սկսեց գոռալ.

- Խփի՛ր, Խփի՛ր...

* * *

Թումանյանի տիկինը, տասը երեխաների մայրը, բարեմտորեն գանգատվելիս է եղել, որ Հովհաննեսն իսկի տուն չի գալիս:

Թումանյանը նրան պատասխանել է.

- Ո՞նց թե տուն չեմ գալիս, ա՛յ կնիկ, եթե իսկի տուն չեմ եկել, մի տա՞սն անգամ էլ չեմ եկել:

## Վերջաբան

Բոլոր մեծերը առանց վարանելու խոստովանել են, որ փառքի դափնին իրապես նրանն է: Բոլոր ժամանակներում խոստովանում են նրա անառարկելի մեծության մասին: Թումանյանական սեղմություն, «Աստո որդի», «զորավոր արքա», «կատարելության

խորհրդանիշ» արտահայտություններով է բնութագրել նրան տաղանդաշատ գրող Հ. Մաթևոսյանը. «Թումանյանով մենք կանք։ Առանց Թումանյանի մենք չկանք»։

Պուշկին-Թումանյանի մասին միշտ խոսվել է սկսած իշխանուհի Մարիամ Թումանյանից ու Տերյանից մինչև այժմ։ Գրիգորևի «Պուշկինը մեր ամեն ինչն է» արտահայտությունը բնորոշում է մեծն Թումանյանին։ Նա իրավամբ մեր անցյալն է ու ներկան, ավանդությունն ու հայոց բառն ու բանը, տիեզերական կատարելությունը։ Նա մեզ զգուշացնում է, որ «Չարն էլ է միշտ ապրում անմեռ, անեծք նրա չար գործին», նա այդ սահմանագծին կանգնած սահմանապահն էր, որ թույլ չտար չարին հատելու սահմանը։ Ամենից շատ նա է բարձրաձայնել ամբոխի վերածված զանգվածների թերություններն ու խորհուրդ տվել. «Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությունը…»։ Եվ այդ պատճառով էլ նա դարձել է մեր դատավորն ու պաշտպանը, մեր առաքինության «ազնվականության վկայականը», մեր հիվանդություններն ախտորոշողը ու հարատևելու դեղատոմսեր առաջարկողը։

Սոս Սարգսյանն ասում էր. «Թումանյանը մեր դեռևս չգրված սահմանադրությունն է, մեր անձնագիրը աշխարհի առջև»։

Այսպիսով՝ Թումանյանը ի մի բերեց հայոց հետմիջնադարյան պատմությունը՝ չունենալով հավասարը իր նախորդներից և ժամանակակիցներից։ Այդպիսին ամեն ազգ միայն մեկն է ունենում։ Ռուսների համար նա Պուշկինն է, ուկրաինացիների համար՝ Շևչենկոն, վրացիների համար՝ Ճավճավաձեն, գերմանացիների համար՝ Գյոթեն, անգլիացիների համար՝ Շեքսպիրը։ Մեզ համար միայն ու միայն Թումանյանը։ Նա դարձավ այն հոգևոր ավազանը, որի մեջ մկրտվեցին մեր հետագա գրական սերունդները։ Նա իր ուսերին է կրում մի ամբողջ մշակույթը։ Եվ ինչպես ասվել է. «Նա է անհաս Արարատը մեր նոր քերթության»։

# Եզրակացություն

Այսպիսով՝ դասավանդողի նպատակը պետք է լինի գրողի կյանքը դարձնել սերունդների ճակատագիրը դարբնող ճշմարիտ ուղեցույց։ Գրողի կյանքը ուսումնասիրեցինք ոչ թե մասնակի մոտեցմամբ, այլ ամբողջության մեջ, նրա կյանքի ու գործունեության վերաբերյալ բազմապիսի տեղեկությունների ընդգրկմամբ։ Այս դեպքում Թումանյանի կյանքը բանալի է նրա ստեղծագործությունների պարզաբանման համար և դա է արժևորում գրողի կենսագրության դաստիրակչական դերը։ Այն միտված է սերունդներին քաջալերելու, կրթելու և արժեհամակարգ ձևավորելու համար։

Թեման ամբողջական դարձնելու համար ներկայացնում եմ Թումանյանի կենսագրության դասավանդման իմ մեթոդիկան 11-րդ դասարանում։

# Օգտագործված գրականության ցանկ


1. Հրանտ Թամրազյան «Հովհաննես Թումանյան. Բանաստեղծը և մտածողը», Նաիրի հրատարակչություն, Երևան, 1995
2. Նվարդ Թումանյան «Հուշեր և զրույցներ», Լույս, Երևան, 1969
3. «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Երևան, 1969//2009
4. Սուսաննա Հովհաննիսյան, «Պատմություններ Հովհաննես Թումանյանի կյանքից», Ծիծեռնակ, Երևան, 2010
5. Արսեն Տերտերյան, «Հայ հայրենասեր գրողներ (երկու դիմագիծ։ Հ. Թումանյանի հայրենասիրական պոեզիան), Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1942
6. Գ. Հ. Կիրակոսյան «Հայ գրականության դասավանդման մեթոդիկա», Երևան, 2015